# ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ

## Ի ՏԷՐ ՀԱՆԳԵԱՒ Տ. ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅ ԱՅՎԱԶԵԱՆԸ



Նոյեմբերի 6-ին 58 տարեկան հասակում վախճանվել է Մայր Աթոռի միաբան, Կոտայքի թեմի Թ-եղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Սարգիս աբեղա Այվազյանը:

Հայր Սուրբի անժամանակ վախճանը մեծ ցավ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության համար:

Հայր Սարգիս աբեղա Այվազյանը ծնվել է Ախալքալակի շրջանի Ազավրեթ գյուղում 1955-ին:

1978 թ. ավարտել է ԵՊՀ Մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետը:

1981 թ. ավարտել է Մոսկվայի Պետական Համալսարանի Մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետի ասպիրանտուրան եւ պաշտպանել է թեկնածուական դիսերտացիան:

1982-1991 թթ. աշխատել է ԵՊՀ Մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետում՝ որպես գիտաշխատող:

1993-1995 թթ. աշխատել է «Գանձասար» աստվածաբանական համալսարանում:

2001-ից ծառայել է Ս. Գեղարդավանքում:

2002-2004 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին ձեռամբ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռնադրվել է սարկավագ:

2004-2006 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում՝ որպես հոգեւոր սպասավոր:

2006-2009 թթ. եղել է Ս. Գեղարդավանքի սարկավագ:

2009 թ. հուլիսի 19-ին ձեռամբ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2009 թ. սեպտեմբերից ծառայում էր Կոտայքի թեմի Թ-եղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցում՝ որպես հոգեւոր հովիվ:

Նոյեմբերի 7-ին, ժամը 17.00-ին Արովյանի Ս. Ստեփանոս եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Հայր Սարգսի հոգու հանգստության համար: Հաջորդ օրը նույն եկեղեցում կատարվեց վերջին օծման արարողությունը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի: